

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ը ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Լիլիթ Մարտիրոսյանս, 2020 թվականի մարտի 13-ից աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

➤ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1441-Լ որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող 2019-2020 թվականների գործողությունների ծրագրի 14-րդ կետով սնանկության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը տրված հանձնարարականի համատեքստում՝

➤ ներկայացրել եմ առաջարկություններ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ,


➤ իրականացրել եմ պետական մարմինների կողմից ստացված իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն, որի արդյունքում նախապատրաստել եմ եզրակացություններ իրավական փորձաքննության ենթարկված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ, մասնավորապես՝ փորձաքննել եմ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, «Հայաստանի Հանրապետության

պետական եկամուտների կոմիտեի 2021-2025 թվականների զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1830-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, «Երևանյան կրկես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտքը ներելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և այլ նախագծեր, ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ուղարկված նախագծեր, կառավարության որոշումների, ինչպես նաև այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, ընդհանուր առմամբ՝ 135 գրություն:

Բացի վերոգրյալը, իրականացրել եմ նաև այլ աշխատանքներ, մասնավորապես՝

- պատասխանել եմ հասարակական կազմակերպություններից, պետական մարմիններից ստացված ընթացիկ գրություններին.
- Պատասխանել եմ քաղաքացիների կողմից ուղարկված գրություններին:

Հարգանքով՝



Լիլիթ Մարտիրոսյան
/22.09.2020/